



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՕՐԵՆՔ

Վ.Ս.ՅԵԼՈՒՉ

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ




Llin

153

1999





Օ Ր Է Ն Ք

Վ. ԱՅԵԼՈՒՉ

ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

0658

Синдикат

Синдикат


Дозволено Цензурою. С. П. Бургъ, 24 Апрель 1870 г.

ՕՐԻՆՔ

Վ.Ա.ՅԵԼՈՒԶ

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ՄԱՆԿՏԻՈՅՆ.



Ի ԹԻՆՊՈՍԻԱ,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին

—
1871



903 / 406

1840

1840

1840

1840




1840

1840


4 153-60

28. 159

ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

 Օրէնքս այսոքիկ կամ Կանոնք վայելուչ կենցաղավարութեան՝ ամփոփեալք ի տողս չափաւորս եւ դիւրիմացս, սննդարար իմն եւ օգտաւէտ ճարակ ընծային բարեսէր մտաց մատաղերամ մանկտւոյն, եթէ խնամով բացատրեսցին նոցա ի վարժապետացն, եւ տացին սերտիւ ուսանել ի բերան տուն առ տուն ի ժամս պարապոյ : Այսու տենչիւ եւ աներկմիտ յուսով կրկին տպագրի արդ մատենիկս — հրատարակեալ ի մէնջ զառաջինն ի Փարիզ յամին 1856, — հանդերձ դոյզն սրբագրուեամբ որ ի սմա բառից ինչ եւ բանից :

ԳԱՅՐԻԷԼ ԵՊԻՍԿ. ԱՅՎԱԶԵԱՆ.



Ա.

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻԻՆ.

Ի՞նչ խըտրի մարդ յանբանից՝
Թէ ոչ բանիւ եւ կրօնիւ.

Ի՞նչ այր քան զայր գերազանց՝
Բայց ըզգած մամբք իւր ազնիւ :

Ազնւագոյն քան ըզբնաւս

Աստուածապաշտն է իմաստ,

Որով միայն է յաստիս

Գու եւ յանտիս բարեբաստ :

Բա՛ւ քեզ զայլոց ըզհաւատս

Ի ծաղր առնուլ վայրապար,

Կամ ըզկրօնից սրբու թիւնս

Յիշել ի խօսս անդադար :

Ոչ ամենայն ոք զօրէ

Զկրօնից վիճել քաջաբար,

Այլ այր հըմուտ, պերճախօս,
Անշահասէր եւ խոնարհ:

Մի զԱստուծոյ սուրբ անուն
Ստէպ ընդ բերան ածիցես,
Բայց եւ լինել բարեպաշտ
Երբէք դու մի ամաչես:

Բ.

ԱՂՕԹՔ ՅԵԿԵՂԵՑԻՈՋ.

Թէ ջերմ իցես աղօթկեր
Եւ եթէ գաղջ կամ թէ ցուրտ,
Սակայն ի քէն միշտ պատիւ
Խընդրէ կրօնիցըն խորհուրդ:
Յեկեղեցւօջ Աստուծոյ
Լեր ցանգ ըղգօն եւ լուռ կաց,
Եւ թէ խօսել լիցի հարկ,
Ցածուն ձայնիւ բարբառեաց:
Ի գնալ քո անդ մի թեթեւ,
Այլ ծանր իցես, դիմօք լուրջ,

Եւ թէ խորհուրդքըն պաշտին՝
Ըզկայ առ, մի հայիր շուրջ:

Աստուածային պաշտամունք
Մինչ հանդիսիւ կատարին,
Գու մի ելցես տաճարին
Եւ կամ զարդուցն ի զընին:

Հանդերձ մաքուր իցէ քեզ,
Բայց եւ պարկեշտ անպաճոյճ,
Եւ ուր կացերն ի սկըզբան՝
Ի նոյն մընա ի տեղւոջ:

Մի զոք երբէք մըղիցես
Յորժամ մերձիս ի սեղան
Ի հաղորդել խորհրդոց
Կամ նըշխարաց պաշտաման .
Այլ քում կարգին ըսպասեա
Եւ յառաջեա զգօնարար .
Ըզնոյն պահեա դու կանոն
Յելս եւ մուտս ի տաճար:

Գ.

ԾՆՈՂՔ , ՈՐԴԻՔ ԵՒ ԱԶԳԱԿԻՅՔ .

Ասպարիզին լաւութեանց
Գըլուխ է տունն հայրենի ,
Եւ որդւոց սէր առ ծընողս
Պարտք են նախկին յետ կրօնի :
Միշտ ակն ած ջիր ծընողաց ,
Արգահատեա ի նոսին ,
Զիղձսըն սիրով կատարեա ,
Եւ հարց խորհուրդ ջերմագին :
Թէ յանկարծ թիւր ինչ ասեն՝
Մի կըշտամբեր ըզնոսա ,
Որչափ գիտուն եւ իցես՝
Երախտապարտ ես նոցա :
Ի գլուխ տարւոյ , յօր տօնի
Եւ ի ծննդեան տարեգարձ
Մաղթանս առնել եւ ընծայս
Է վայելուչ ձօնել հարց .

Թէ ի ծնողաց ի բացեայ
Յերկիր օտար պանդըխտիս,
Ըստէս ըստէս գըրեա գիր,
Հատո զսիրոյն քո պարախա :
Շատ կամ սակաւ մեծարանս
Եւ սէր ի քէն ակն ունին
Սրեանառուք ըստ կարգի
Մինչ յազգակիցսրդ վերջին :
Քանի այսպանք են ումեք,
Թէ արտաքոյ բարեկիրթ
Եւ յիւրան իցէ տըխրագէմ,
Եւ վարիցի բանիւք բիրտ :
Ի քո տանէդ սկիզբն արա
Շընօրհաշուք գընացից,
Եւ արտաքին կենցաղոյդ
Տուն քո լիցի վայր մարդից :
Սէր եւ գորով առ որդիս
Պարտ եւ օրէն է ծնողաց .
Բայց ոչ անդուլ ըղնոցունց
Խօսել հանդէս օտարաց .

Եւ թէ մանուկ սըխալէ
Կամ պատժապարտ գըտանի,
Ոչ միշտ օգուտ է խրատել
Ըզնա այլոց առաջի :

Դ.

ՏԷՐ ԵՒ ԾԱՌԱՅ.

Լեր ընդ ծառայս քաղցրախօս
Եւ ծանրակաց հանապաղ.
Մի երբէք խհատ եւ դաժան,
Եւ մի 'նդ նոսա զճաղու դաս :
Ներեա նոցին թերու թեանց
Բազում անգամ կամակար,
Ձի եւ սաստել կարասցես
Ի դէպ ժամու տիրաբար :
Մի թոյլ տացես ծառային
Ձի հանգերձիւք աղտեղի
Ելանիցէ 'նդ առաջ քեզ
Եւ կամ առ քեւ նըստիցի :

Ի գրոյցըս քոց բարձակցաց
Մի խառնեսցի բնաւ ծառայն ,
Մի ակնարկի առնիցէ ,
Մի բիրտ տացէ պատասխան :
Զիդջ լիցի քեզ՝ ի ծառայս
Թէ վըստահիս կուրօրէն ,
Բայց եւ կասկած ընդ նոսա
Ցանգ ցուցանել չէ օրէն :

Ե.

ԾԱԽՔ ԵՒ ՊԱՐՏՔ.

Որ ինչ քեզ ոչ է պիտոյ՝
Մի տղայաբար գընեսցես .
Եւ թէ գնեսցեր՝ անդանդադ
Ըզսակ գընոյն հատուցես :
Ինքնին հատո զքո պարտիս ,
Բայց լեր ըզգոյշ ի պարտուց .
Կնլ հաշուեգրով անվըրէպ
Զել եւ ըզմուտըս ծախուց :

2.

ՀԱՆԴԵՐՁ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ.

Հանդերձք իցենք քո մաքուր՝
Թէ եւ կայցես ի քում տան,
Գիշերազգեստ տարազու
Մի գար երբէք յերեւան:
Բայց թէ ուրեք ելանես,
Զգեցիր հանդերձ մաքրագոյն.
Մի բնաւ կարի պըճնազարդ,
Մի գըրգլեկօք կարկատուն:

Այր հասակեայ չըպարտի
Զգենուլ պայծառս նորածեսս,
Բայց եւ ըզգօն պատանին
Խորշի զգենուլ յոյժ թե թեսս:

է.

ԱՆՈՒՆ ԵՒ ՎԱՐՔ ԲԱՐԻՔ.

Գանձ պատուական է մարդոյ
Անուն ամբիժ եւ բարի .

Զոր թէ կամիս ըստանալ՝

Լըցո զպարտիսդ անթերի :

Մի բանսարկու , մի փասքուս ,

Մի եղիցիս կըռուասէր ,

Մի սըտասաց եւ շողմոգ ,

Այլ միշտ արդար , սըրբասէր :

Ը.

ԳԻՆ ԵՒ ՎԱՃԱՌ.

Կըրպակաւոր թէ իցես՝

Նախ զեկաւորն ողջունես ,

Նըստել յաթու հրաւիրեալ

Եւ հարց թէ զինչ խընդրէ նա .

Թէպէտ եւ ժիտ այրն իցէ ,
Թէպէտ եւ յոյժ դըժպըհի ,
Որ համբերէն այնպիսում՝
Զարծաթ եւ զկեանքս շահի :
Բայց դընողին ծանրագոյն
Պարտք են լինել մարդավար ,
Ոչ անարգել ըզվաճառս ,
Զըտալ հրամանս տիրաբար . —
Սակ արկանել ողորով ,
Եւ թէ թուեսցի թանկագին՝
Զիղջ յայտ առնել զի չառնուս ,
Եւ մեկնել յետ ողջունին :

Թ.

ԱԽՏԱՑԵԱԼ ԵՒ ԲԺԻՇԿ .

Հիւանդ իցես , մի տըրտունջ
Եւ գանգատանս առնես զուր .
Այլ առ հարցմունս բըժըշկին
Տուր պատասխան կարեւոր :

Ներուամն հայցեալ եւ պատմեա
թէ նախընթաց դէպք կայցեն ,
Մի մուսացիս շնորհ ունել
Նորա փութոյն որ ըզքէն :

Ժ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐ.

Մատենագիր թէ իցես
Կամ նրկարիչ ոք քաջուս ,
Մի զքո վաստակսրդ դովեր ,
Մի զյաջողուած կամ ըզյոյս .
Բայց մըտերիմ ծանօթից
Եւ որոց կիրթ է ճաշակ՝
Մարթիս ճառել զարուեստէդ
Եւ չըլինել նըշաւակ :

Ուսումնասէր պատանւոյ
Վրտանգ է յոյժ մօտալուտ
Ըզնողկալին ժառանգել
Զիմաստակի անուն ցուրտ .

Ըզգոյշ կաց մի պարծեսցիս
Գիտել զոր ոչըն գիտես ,
Մի ստուգեսցի եւ ըզքէն
Եթէ աղքատ հրպարտես :
Բայց մի եւ այր անհրմուտ
Այսն ըզգիտնովք առնիցէ .
Ծաղրել զոր ոչըն գիտես ,
Միայն օրէն խրժից է :
Թէ բանք իցեն քո ընդ առն
Որ գրոց իցէ յօրինող ,
Զայն դու յիշես , եւ խելօք
Արա զգրոյն սուղ ինչ ներբող :
Մատենագիր զիւր ինչ երկ
Եթէ ի նուէր քեզ յըղեաց ,
Յայց եւ առ նա իուլթասլէս ,
Կամ թուղթ գրրեա գրրուատեաց :
Եթէ զնրկար տեսանես
Ճարտարարուեստ նրկարչի ,
Կամ ունկընդիր նըլագաց
Նըլագածուին կաս քաջի ,

Ջրննեա եւ լուր մըտադիւր ,
Հարցումն արա շնորհալից ,
Ջհանճար գովեա ճարտարին
եւ լեր նըմա խընդակից :

Եթէ գըրուած համառօտ
Ընծայեցեր դու ի լոյս ,
Մէն մի յըղեա օրինակ
Առ բարեկամս եւ ծանօթս .
Ի ճակատուն կամ ի կող
Չանուն դրոշմեալ առողին
եւ ի ներքոյ զքո անուն
Գըրեա ձեռամբըդ քոյին :

ԺԱ.

ՔԱՀԱՆԱՅՔ.

Ընդ քահանայս չէ օրէն
Խաղս յաճախել եւ կատակ ,
Այլ մեծարել ըզնոսին
Իբր Աստուծոյ նըւիրակ :

Բայց եւ նոցա չէ արժան
Խոտել զանձանց ըզպատիւ,
Այլ ցանդ զըւարթ եւ լուրջ կալ,
Շարժամբ խօսիւք միշտ ազնիւ:

ԺԲ.

ԳՆԱՅՔ Ի ՃԱՆԱՊԱՐՀԻ.

Թէ ոք ծանօթ կամ աւադ
Եւ քեզ յուղւոջ ընդ առաջ,
Զորմոյն ըզկողմըն նըման
Տուր եւ կացջիր դու ընդ աջ:
Եթէ խափան ինչ կայցէ
Յանցրս տեղւոյն յոր հասեր,
Սպասեա մինչեւ այլք անցցեն,
Եւ դու մի բնաւ զոք մըղեր:
Մինչ ի տըղմուտ ընթանաս,
Մի ցայտեսցի ցեխ ըզքեւ.
Հանդարտաքայլ դընասջիր,
Լեր յոտընփոխըս թեթեւ:

Մի ընդ ումեք հարկանիս
ի մարդաշատ ինչ փողոց,
եւ մի յախուռն արշաւեր՝
Զի մի բաղխիս դուն յայլոց.
Եթէ չիցես մըտադիր
Այամ անհրաժեշտ խըրատու,
Ոչ բիրտ միայն վրկայիս,
Այլ եւ պատճառք վրնասու:

Զգուշեալ քայլել չէ գիւրին
Մինչ ունիցիս հովանեակ.
Ըստ դէպս ի վեր զայն ձրգեա,
Կամ ունիջիր վայրահակ.
Թէ ոք առ քեւ պատահեալ՝
Անհովանեակ հետեւի,
Եւ ընդ քոյովրդ խընդրէ
Պատըսպարան յանձրեւի,
Ընկալ ըզնա քաղցրութեամբ,
Հարց եթէ ուր գընայցես,
Եւ մինչեւ հուպ ի տեղին
Լեր ուղեկից թէ կարես:

Եթէ չդիտես դ՛ո՛ւ զուղին
Որ տանիցի յայն ինչ վայր,
Ողջոյն ումեք տուր եւ հարց,
Եւ շնորհ կալձիր կամակար:
Մի ունկընդիր լինիցիս
Երբէք այլոց թէ խօսին,
Եւ մի ուրուք ի հետոց
Գնայցես իբրեւ անմեկին:
Չէ պարտ ի դէմս անցորդաց
Պըշնուլ յառել գռեհկաբար,
Եւս առաւել թէ տիկին
Ոք գայ՝նդ քոյին ճանապարհ:
Ողջոյն պատուոյ տուր եւ անց
Քու՛մ ծանօթին եթէ գայ.
Թէ սերտագոյն քեզ իցէ,
Մատիր եւ հարց զի՛արդ կայ:
Մեծըն տիօք կամ բարձիւ
Նախ մեկնեսցի գնալ յուղին,
Բայց կըրտսերոյն է օրէն
Կանխել յողջոյն հրաժեշտին:

Հակիրճ լիցի որ յուղուջ
Ընդ բարեկամըս զըրոյց,
Կըրտսեր կայցէ յորմըն կոյս,
Թիկնադարձ միւսն ի փողոց:
Բան կարեւոր թէ ունիս
Ասել քոյուժ ծանօթին,
Հայցես հրաման ի նմանէ,
Երթ խուռն ինչ վայր ընդ նըմին:
Եթէ իցէ առ նովաւ
Այլ ոք այր քեզ անծանօթ,
Մի յամեսցես ի խօսել,
Անցողջունիւ համառօտ:
Մինչ ընդ ումեք գընայցես,
Եւ նա ողջոյն այլուժ ետ,
Պարտիս եւ դու տալ ողջոյն
Թէ եւ իցես առնն անգէտ:
Ի պատուհանս ինչ յանկարծ
Եթէ ծանօթ զոք տեսեր,
Եւ զի եւ նա զքեզ ետես՝
Զայն ճըշմարտիւ գիտացեր,

Ողջոյն եւեթ պարտիս տալ
եւ գնալ լըռիկ ընդ ուղի .
Իսկ բարբառել երբէք ոչ ,
եւ ոչ առնել ակնարկի :

ԺԳ.

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ.

Յայց առ իրեարս յաճախել
Հարկ եւ սիովուժն է մարդկան ,
եթէ ի տօնս իցէ դէպ
եւ թէ յօրէն հանրական :
Ի գլուխ տարւոյ նախ ծընողք ,
Աւագք ապա յարգեցցին ,
Կարգ ըստ կարգէ բարեկամք
եւ բարերարք յետ նոցին :
Միով աւուրբ կամ երկու
Կանխել քան զօր կաղանդի
Գործ է մարդոյ որ պատիւ
Յոյժ տալ ումեք կամիցի .

Ի նմին աւուր յայց գընալ
Եւ մեծարանք են եւ սէր .
Բայց յով երթալ եւ կամիս՝
Մի քան զեօթնեակն յապաղեր :
Յայցելութեան զգեստ մաքուր
Եւ նոր զգեցիր ըստ կարի .
Մի շատ կացցես ուր եւ գնաս ,
Մի քան զքառորդ աւելի :
Թէ այլ ոք գայ ի վերայ՝
Հրաժեշտ տաջիր վաղագոյն ,
Զի մի տաղտուկ եղիցիս
Եւ տանուտեառն եւ հիւրոյն :
Այց ազգակիցք ի միմեանց
Ոչ պահանջեն փոխադարձ ,
Սակայն չէ պարտ մինչ ի սպառ
Ըզպատշաճիւքն առնել զանց :
Այցելութեանց յեւրոպէ
Այս ընդհանուր է օրէն .
Ոչ անադան այցելութին
Ելանել յայց փոխարէն .

Միայն ի դէպ է դիտել
Թէ երբ առ քեզ միւսըն դայ,
Զի զայն առցես ի կանոն
Այցելութեան քում առ նա:
Թէ տկար իցես եւ կամ խօթ,
Յայց ելանել ոչ է հարկ.
Եւ մի գնայցես տարածամ,
Գիտեա զմիւսոյն ժամանակ,
Ի կայս ի կոյս եւրոպայ
Զանազանեալ է կանոն,
Բայց միջօրէն միշտ ի դէպ,
Ոչ այգն եւ ոչ երիկուն:
Եթէ ծառայն ասիցէ
Թէ չէ ի տան տանուտէր,
Դու թէ տեսեր իսկ ըզնա՝
Մի զհակառակըն պընդեր.
Այլ թող անդէն ըզթըզթեակն
Յորում դրոշմի քոյդ անուն,
Ծալեալ ըզմին ի ծայրից
Ի նշան անձամբ երթալոյն:

Թէ չիք ի տանն ըսպասեակ

Որ ազգ ըզքէն առնիցէ,

Մի հապճեպով մըտաներ,

Բախեա զի ոք ձայն տացէ:

Մի կանխեսցես դու բազմել՝

Ի բազմական հրաւիրեալ.

Փութա զաթոռ դուն առնուլ՝

Չեւ տանուտեառնն բերեալ.

Քան զտանուտէր միշտ ի վայր,

Եւ մի ի վեր նըստիցիս.

Մի կուռն յաթոռն թաղեր,

Եւ մի նովիմք երերիս:

Թէ տանուտէրն ելանել

Կամի, եւ զայն դու զգացեր,

Թէ եւ նա կալ ըստիպէ՝

Մի եւս այլ շատ յապաղեր:

Եթէ բանից թել հատաւ,

Եւ նա ինչ նոր յաւել ոչ,

Դարձեալ քեզ ոչ է օրէն

Շատ յամել յայնլմ տեղւոջ:

Այլք անծանօթք քեզ ի տան
Անդ թէ կայցեն եւ խօսին ,
Տուր տանուտեառն ողջոյն սուղ
Եւ նիստ հանդարտ եւ լրօին :
Զբանիւք նոքա՛ թող անկցին .
Յետ սակաւուց թէ կամիս
Ողջոյն բնաւիցըն տըւեալ
Կամ լրուութեամբ մեկնեսցիս :
Առ տանուտեառըն մինչ կաս ,
Թէ թուղթ առ նա հասանէ ,
Բայց նա անբաց զայն թողու
Կամ զառաջեաւըն դընէ ,
Խընդրեա բանալ ընթեռնուլ՝
Զի մի լիցիս դու խաւիան .
Եւ թէ չեբաց՝ գիտասջիր
Զի գնալ ի բաց է արժան :
Թէ յընտանեաց ոք՛ եմուտ
Յայցելութեան քո սլահուն ,
Դու մի մեկնիր առ ժամայն ,
Այլ յօտըն կաց՝ տուր զողջոյն :

Ա. յնպէս ընկալ զայցելուս
Քո պատուասէր հըրճուանօք,
Զի գոհու թեամբ երթիցեն՝
Ա. յդրէն դարձի տենչանօք.
Ի մուտ եւ յելլս նոցին
Յոտըն կացջիր մըտադիւր,
Թէ ոչ սանդղոց մինչ ի գլուխ,
Գէթ մինչ ի դուռն երթիջիր:

ԺԴ.

ՇԱՐԺՈՒՍԾՔ.

Պըշնուլ ի դէմս գուհկօրէն,
Ըզգլուխ ընդ վայր տատանել,
Կալ յերերի անդադար,
Խիղբ ըզճընգօք արկանել,
Ազգ-ըր զազդերբ հեծուցիկ՝
Զոտըս պարզել ի խարոյկ,
Ի հայելուջ հըտպըտել,
Զհերս յարդարել եւ ըզմոյկ,

Բուռն հարկանել զումեքէ,
Բառնալ քըրքիջ բարձրաձայն,
Չաչս անհեթեթ դարձուածովք
Չըգտել յերկինս յարաժամ,
Խաղալ մատամբք ընդ զարդու,
Չայլոյ խեթկել սոն ոտամբ,
Չճայրս ընչացից ոլորել
Յար վայրայածըն մատամբ,
Յանձանօթին ի տըլիոյ
Խլել մըխոցաւ ընչադեղ,
Կամ թէ նըմին կարկառել
Ըղկարծեցեալըն զայն դեղ. —
Այս ամենայն արարուածք
Եւ այսպիսիք անհամար
Այլոց տաղտուկ արկանեն,
Եւ զքեզ առնեն արհամարհ :
Դու թէ չկամիս ծաղըր կալ,
Եւ ոչ այլոց տալ ձանձրոյթ,
Քրննեա զանձին թերութիւնս
Եւ արկ ի բաց վաղ ընդ փոյթ :

Յորժամ խօսիս՝ ըզլեզուդ
Մի առ շըրթամբք ունիցիս,
Ձի մի բըզզալ կամ ծաղրել
եւ կամ թոթով թըւիցիս:
Եթէ յանկարծ լորձն եւ թուք
Ի բերանոյդ կաթեսցի,
Ձիմանալոյն առնիջիր,
Բայց տես՝ մի այլ դիպեսցի:
Չախողակի կակազոտ
Եթէ իցես կամ թըլուատ,
Չամենայն ճիգն արկ ի վար
Առնել զլեզուդ քո ազատ.
Գիրս ընթերցիր բարձրաձայն,
եւ բառս հընչեա դըժուարին,
Որպէս արար Դեմոսթեն,
Որպէս յոլովք արարին:
Թէ մաքրուիտեան ես սիրող
եւ քաջառողջ իսկ կենաց,
Խընամ կալջիր հանապազ
Մաքրուիտեան քոց ատամանց.

Բազում անգամ պերճախօս
Եւ շնորհալից ասացուած,
Առ ատամանցըն նեխոյ
Մարթի խոտիլ յունկընդրաց :
Սակայն թէպէտ եւ մաքուր
Շարս ատամանց ունիցիս,
Մի շատ բացցես ըզբերան
Մինչ ընդ ումեք խօսիցիս :
Մասն ի լընտերըս մըխել,
Ծաղիկ տանել ի բերան, —
Սովորութիւնք են ներեալք
Թերեւս գուեհկացըն միայն :
Կամիս լինել բարեկիրթ,
Ունել ընտիր ախորժակ,
Մի ի խօսելն յաճախեր
Ձեւս եւ շարժմունս այլանդակ .
Ձէ վայելուչ ի պարզ բան
Խորհրդաւոր առնել ձեւս,
Եւ ոչ ի ծանրը զըրոյց
Շարժմունս արագ եւ թեթեւ :

Գովեմ ես զայն պերճախօս
Որ շարժուածովք ճահաւոր
Կենդանութիւն տայ բանին
Եւ կերպարան կարեւոր :

Մարթիս ըզճախըդ բազուկ
Ունել անշարժ ի կայի ,
Զաջ ըստ տեղւոյն տատանել
Յոյժ վայելուչ վրկայի .

Իսկ զոր ունին ոչ սակաւք՝
Այն է գըժխեմ սովորոյժ ,
Զեռն ի գըրպանս կամ ի ծոց
Կամ մած ի լանջ կալ անփոյժ :

Որ կայն անշարժ եւ խօսի ,
Թըլի խօսուն մեքենայ ,
Եւ որ շարժին անհեթեթ՝
Կարծի հարեալ դեւ ի նա :

Բայց դու եւ այսըմ միտ դիր .
Թէ ոք առնէ զայդպիսիս՝
Անտես արա մըտադիւր ,
Թէ ոչ՝ եւ դու այպանիս :

ժե.

ԶՐՈՅՅՔ ԵՒ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ.

Ոչ անդադարըն զըրոյց
է կենցաղել ընդ մարդկան ,
Այլ գործ է կալ ունկընդիր ,
Ի դէպ խօսել միշտ զարժան :

Թէ ոք առ քեզ ինչ ասէ ,
Հայեաց ի դէմսըն զըւարթ ,
Եւ ի խօսելդ ընդ ումեք՝
Այլ ինչ գործել ոչ է պարտ :

Եթէ զխօսողըն վարանք
Կամ մոռացօնք ունիցին ,
Յանդէտըս լեր կամ ցածուն
Բանիւ օգնեա ծանօթին .

Թել զըրուցաց ընկերին
Եթէ յանկարծ հատանի ,
Ի դադարել պատճառին
Քեզ յուշ առնել անկանի .

Բայց ողորով՝ զի յառանջ
Ըզբանն հատեալ վարեացէ .
Իսկ հատանել զայլոց խօսս
Երբէք ումեք անկ ոչ է :

Միանգամայն թէ խօսիք
Ի ջերմաջերմըն զըրոյց ,
Հարկ է լըռել փութապէս
Միումդ ի ձէնջ յերկոցունց .
Ներումն հայցել ի միւսմէն
Եւ խօսելոյ տալ հրաւէր ,
Մինչեւ ըսկիզբն արասցէ
Այն որ կարգաւն է ի վեր :

Թէ պատմութիւնն ոք պատմեալ
Եւ զուարճալի զայն կարծէ ,
Կամ գորովի յիւրն ի բանս
Եւ ըզքո սիրտ ոչ շարժէ ,
Թէպէտ եւ յոյժ ձանձրասցիս՝
Ցոյց խուն ի դէմսըդ ժըպիտ ,
Զի մի լըքցի սըրտաբեկ
Քոյդ վիպասան պարզամիտ :

Թէ բանս ի բանս աղխաղխեալ
Գնաց յոյժ հեռի յիմաստէն,
Համբեր ժուժեա լըռութեամբ
Մինչեւ դարձցի նա անդրէն .

Եթէ անծայր անաւարտ
Այն պատմութիւն երեւի,
Եւ վիպասանն է աւանգ
Ոք կամ տիօք ծերունի,
Դարձեալ ժուժեա մըտադիւր .
Իսկ թէ իցէ դիւրընտել,
Կարես ճարտար դարձուածով
Ջնասկիինըն բան յուշ առնել :

Գործ է փափուկ դըժպըհի
Ջբանից հայցել կըրկնութիւն .
Բայց թէ իցեն եւ բազումք
Որ չիմացան քեզ հանգոյն,
Եւ հարկ իցէ խօսողին
Կըշուել ի դէպ պատասխան,
Նախ ըզներումըն խնդրեալ
Եւ ապա հարց ըզնոյն բան :

Եթէ ոք սուտ ինչ եւ կեղծ
Վիպասանել ախորժէ,
Գիտեմ զի զգօն ունկընդրին
Ոչ սակաւ վիշտըս բերէ.
Թէ հաւատաս՝ այսպանիս
Իբր այր տըխմար եւ ապուշ,
Եւ թէ հերքես՝ տըմարդի
Կոչիս կամ խրոխտ անըզգոյշ.
Յայսգոյն ի դէպս անկորուստ
Պահես զանձին ըզպատիւ
Թէ ցուրտ դիմօք ի լուր կաս
Եւ ցըրտագոյնըս սըրտիւ:

Մինչ ջերմաջերմըն պատմէ
Ոք իբր անլուր ինչ եւ նոր
Որում իցես դու տեղեակ
Գէթ ըստ մասին կարեւոր,
Մի առնէր յայտ թէ գիտես,
Զի մի կրեսցէ նա զամօթ,
Թէ եւ բանիւք անալի
Խանդարիցէ զհամն եւ զհոտ:

Մի շուժափեր ի խօսելդ
եւ մի լինիր ծանր եւ ձիգ,
Զյըստակ հընչօւմըն սիրեա
եւ զառողանս գեղեցիկ:

Վաշ իմ քաջին որ հըմուտ
է բարբառոյն հայրենի,
եւ որ ի հայ ճօխ լեզու
Բան չըխառնէ վայրենի:

Ըստէպ ոգեա ի գըրոյց
Ըզխօսակցիդ պատուանուն,
Տէր ասելով կամ տիկին,
Կամ վարդապետ կամ պարօն:

Պատասխանի թէ հարցմանց
Ունիս կըշուել օտարին,
Մի շատ գըրեր ասել լով
Ս.յօ կամ ոչ ցըրտագին:

Գործ թէ պատմես յորում լեակ
Իցեն եւ այլք քեզ կըցօրդ,
Նախ զայլոց դէմս ած ի յուշ,
Յետոյ ի մէջ բեր ըզքոյդ:

Թէ ընդհարար ընդ ումեք,
Ներուան հայցեա դու իսկոյն.

Ասել թէ չիք ինչ վընաս՝
Այն վայելուչ է միւսոյն:

Թէ ախորժես դու ի բնէ
Պատմող լինել դիպուածոց,
Տես թէ կայցէ յունկընդիրսդ
Եւս ախորժից տարացոյց:

Որ ցանգ զիւր բանըս պընդէ՝
Ընդ այնպիսում մի կագեր.

Խոտեա մըտօք զիմաստակ,
Ըզճաղրածուն մի յարդեր.

Գովեա զբարին, այլ չախով.

Մի յոյժ գըրգռիս ընդ չարի.

Ընդդէմ ազգի կամ տեղւոյ

Կըքրել է գործ յիմարի:



ԺԶ.

ՆԱՄՍԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

Նամակ սիրուն է հակիրճ
Եւ քաղցր ոճով՝ գիւրիմաց,
Ի թուղթ ազնիւ՝ սուրբ յաղտոյ,
Ոչ ունելով ըզքերած:
Անպատասխան ընդ երկար
Ծանր է թողուլ ըզքարտէս.
Մի գրեր առանց փրկանաց՝
Յորժամ շընորհ ինչ խնդրես:
Ի պատրւակ ամփոփել
Ըզթուղթ նըշան է պատուոյ:
Քան նըշխարաւ զայն փակել՝
Լաւ է վարել մոմ կընքոյ:

ԺԷ.

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ.

Մի խոստանար ճոխապէս,
Զոր խոստանաս՝ կատարեա .
Ընծայս սիրով ընկալջիր,
Այլ ըզխըրատ մեծարեա :

Եթէ երկու կամ երեք
Ոմանք հրծծեն մեկուսի,
Չէ պարտ մօտել աւ նոսա
Եւ ականջել զինչ ասի :

Գործ է ստահակ պատանեաց
Եւ անըզգոյշ որերոյ
Ըզկահս յուզել այլոյ տան
Եւ ըզգըրեան սեղանոյ,
Զնամականին վերձանել,
Կալ ի զընին դրարանի,
Եւ մանաւանդ ըզնամակ
Բանալ առանց հրամանի :

ԺԸ.

ՃԱՆԱՊԱՐԶՈՐԴՈՒԹԻՒՆ.

Ի ճանապարհ չեւ անկեալ՝
Յայց եւ քոյոց ծանօթից,
Եւ յուզուջ տես մի ումեք
Գոլ անձընդիւր ուղեկից.
Մի դպատուհանրս կառաց
Բանար փակեր ըստ հաճոյս.
Ընդեւասջիր ուղեկցաց,
Բայց քում գաղտնեաց լեր ըզգոյշ:



ԺԹ.

ԽՐԱԽՈՃԱՆ.

Հաճոյք միմեանց եղիցին
Զորս ի խրախուճս հրաւիրես.
Գէթ երկաւուրքք ինչ յառաջ
Ազգ առ նոսին արասցես:
Գեղայարմարք եղիցին
Ըզսեղանով բազմականք,
Եւ յորդեսցեն ի նոսա
Սէր եւ սլասիւ՝ մեծարանք:
Մի ծառայիցըն սաստեր,
Մի դըրսրովեր զկերակուր.
Մի բուռն առներ ուտել շատ,
Մի յար զբաժակըս լընուր:
Ի սեղանի լեր մաքուր,
Ծանր եւ զըւարթ՝ աչալուրջ,
Կալ քեզ կանոն զոր ունին
Աւագք որ կան ըզքեւ շուրջ:

Ի.

ԽԱՂ.

Ուսիր յաղթիլ ի խաղի
եւ կալ մընալ անտըրտում,
եւ մի կարի հըրճուեսցիս
ի վաղանցիկ բաղդին քում :
Նենգ եւ խաբկանք ի բացէ,
Զըւարճ իցեն ըզբօսանք,
Քանզի կրուուով եւ կազիւ
Ոչ խաղ նիւթի՝ այլ տանջանք :

ԻԱ.

ԱՅՅ ԱՌ ՀԻԻԱՆԴՍ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՒՈ-
ՐՈՒԹԻԻՆ.


Այցդ առ հիւանդն իցէ սուղ,
Եւ սըրտառուչ խընամով.
Քաջալերեա ժուժկալել՝
Զդեղն եւ զբըժիշկ գովելով :
Փուժա թաղման ի հանդէս
Բարեկամաց ծանօթից ,
Եւ թէ իցես բացական՝
Գըրեա նամակ կարեկից :



THE HISTORY OF THE

EMPIRE

OF THE ROMANS
FROM THE FOUNDATION OF THE CITY
TO THE DESTRUCTION OF THE EMPIRE
BY THE BARBARIANS
IN THE YEAR OF THE WORLD 4106
BY JOHN BISHOP, BISHOP OF CANTON
LONDON, PRINTED BY R. CLAY AND COMPANY, BUNGAY, SUFFOLK
1885



ՅԱՆԿ ԳԼԽՈՅ,

Ա. Աստուածպաշտութիւն.....	7
Բ. Աղօթք յեկեղեցւոջ	8
Գ. Ծնողք, որդիք եւ ազգակիցք.....	10
Գ. Տէր եւ ծառայ.....	12
Ե. Ծախք եւ պարտք.....	13
Զ. Հանդերձ եւ մաքրութիւն.....	14
Է. Անուն եւ վարք բարիք.....	15
Ը. Գին եւ վաճառ.....	—
Թ. Ախտացեալ եւ բժիշկ.....	16
Ժ. Ուսումնական եւ ճարտար.....	17
ԺԱ. Քահանայք.....	19
ԺԲ. Գնացք ի ճանապարհի.....	20
ԺԳ. Այցելութիւնք.....	24
ԺԴ. Շարժուածք.....	29
ԺԵ. Զրոյցք եւ ունկնդրութիւն.....	34
ԺԶ. Նամակագրութիւն.....	40
ԺԷ. Վայելչութիւն.....	41
ԺԸ. Ճանապարհորդութիւն.....	42
ԺԹ. Խրախճան	43
Ի. Խաղ.....	44
ԻԱ. Այց առ հիւանդս եւ յուղարկաւորութիւն.....	45

1848

1. The first of the year was a very cold one, with much snow and ice.

2. The second day was a little warmer, but still very cold.

3. On the third day the weather began to improve, and the snow melted.

4. On the fourth day the sun shone brightly, and the weather was very pleasant.

5. On the fifth day the wind blew from the north, and the weather was very cold.

6. On the sixth day the weather was very cold, and the wind blew from the north.

7. On the seventh day the weather was very cold, and the wind blew from the north.

8. On the eighth day the weather was very cold, and the wind blew from the north.

9. On the ninth day the weather was very cold, and the wind blew from the north.

10. On the tenth day the weather was very cold, and the wind blew from the north.

11. On the eleventh day the weather was very cold, and the wind blew from the north.

12. On the twelfth day the weather was very cold, and the wind blew from the north.

13. On the thirteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

14. On the fourteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

15. On the fifteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

16. On the sixteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

17. On the seventeenth day the weather was very cold, and the wind blew from the north.

18. On the eighteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

19. On the nineteenth day the weather was very cold, and the wind blew from the north.

20. On the twentieth day the weather was very cold, and the wind blew from the north.

